

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014 - 2015 թթ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ

ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

2013 թ. վերջերին ձևավորվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժինը: Մշակվել է բաժնի կանոնադրությունը, հատկացվել է մեկ սենյակ ԳԿՄԿ Հիմնարար գրադարանի մասնաշենքում, բաժինը ապահովվել է համակարգչային սարքավորումներով, անհրաժեշտ գրասենյակային կահույքով և պիտույքներով:

2014-2015 թթ. հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի ապահովման բաժնի կողմից իրականացվել են հետևյալ գործառույթները.

- Ուսումնասիրվել են այլ բուհերի ՈԱ բաժինների կողմից կազմակերպվող և իրականացվող հարցումների ձևաչափերը:
- Մշակվել են հարցումների հարցաթերթերի օրինակներ, մասնավորապես՝ ա/«Շրջանավարտների՝ կրթական ծրագրերից գոհունակության հարցման հարցաթերթիկը», բ/ Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների հարցաթերթը, գ/ Գործատուների շրջանում անցկացվող՝ ԳԿՄԿ շրջանավարտներից գոհունակության հարցման հարցաթերթը, դ/ԳԿՄԿ ուսանողների շրջանում անցկացվող խմբային հարցազրույցի հարցաթերթը, ե/ Պրակտիկայից մագիստրոսների գոհունակության հարցաթերթը, գ/ Վերապատրաստումների որակի մասին հարցում-գնահատման հարցաթերթ:
- Իրականացվել է 2012-2014 թթ. առկա ուսուցման շրջանավարտների՝ կրթական ծրագրերից գոհունակության հարցումների վերլուծություն:

- Իրականացվել է 2012-2014 թթ. հեռակա ուսուցման շրջանավարտների՝ կրթական ծրագրերից գոհունակության հարցումների վերլուծություն:
- Իրականացվել է դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների վերլուծություն (2013-2014, 2014-2015 ուսումնական տարիների կտրվածքով), վերլուծության արդյունքները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացվել են համապատասխան ամբիոնների վարիչներին, հրավիրվել են ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ինչպես արդյունքները, այնպես էլ մագիստրոսների բարձրաձայնած հարցերն ու առաջարկները:
- Կազմակերպվել են հանդիպումներ ինչպես ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ բոլոր ամբիոններում՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, այնպես էլ վարչական ստորաբաժանումների ղեկավարների հետ, որտեղ ներկայացվել են Կրթության որակի ապահովման բաժնի խնդիրները, գործառույթները, հետագա անելիքները, ներկայացվել է որակ հասկացությունը բուհական համակարգում, նաև ներկայացվել են հարցումների արդյունքները, ուսանողների բարձրաձայնած խնդիրները քննարկվել են ամբիոնների նիստերում:
- Կազմակերպվել են պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում վերապատրաստումներ 3 ուղղություններով՝ «Բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման հիմնախնդիրներ» /Վարող՝ Ռ. Թոփչյան/, «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում»/Վարողներ՝ Գ. Պետրոսյան, Գ. Մինասյան/, « Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ և մեթոդներ» /Վարող՝ Հ. Պետրոսյան/, որոնց մասնակցել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 130-ից ավել դասախոսներ: Վերապատրաստումների վերջին օրըՈԱ բաժնի կողմից անց է կացվել վերապատրաստման անցկացման վերաբերյալ հարցում-գնահատում, որի արդյունքներն ամփոփվել են հաշվետու ժամանակաշրջանում:

- Կազմվել, մշակվել և հրատարակվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Որակի ապահովման ձեռնարկը երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն:
- Համաձայն Կարլովի համալսարանից ստացված հրավերի հաշվետու ժամանակաշրջանում՝ 20.06.2014-27.06.2014 թթ., ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 5 աշխատակիցներ գործուղվեցին Պրահա՝ առաջավոր փորձի ուսումնասիրության նպատակով: Կարլովի համալսարանում ուսումնասիրեցին գործող ՈԱ համակարգն ու մեխանիզմները, հանդիպեցին տարբեր ստորաբաժանումների ղեկավարների, այդ թվում՝ պրոռեկտոր Ստանիսլավ Ստեչի հետ, բանակցեցին հետագա համագործակցության, ՈԱ շրջանակներում հետագա փորձի փոխանակման հնարավորությունների և այլնի մասին:
- ՈԱ բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է արտերկրի լավագույն փորձի փոխանցում՝ սեմինար-քննարկումների միջոցով, մասնավորապես Պրահայի Կարլովի համալսարանից վերադառնալուց հետո կազմակերպվել է 3 հանդիպում ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմի և ստորաբաժանումների ղեկավարների հետ, և վերջիններիս ներկայացվել Կարլովի համալսարանի մոտեցումները կրթության որակի ապահովման և կառավարման ուղղությամբ:
- Բաժնի կողմից Գործատուների հետ տարվել են պիլոտային աշխատանքներ: Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել է գործատուների հարցման թերթիկ, ստեղծվել է դրա էլեկտրոնային տարբերակը, դուրս են բերվել մի քանի մասնագիտությունների գծով պոտենցիալ գործատուները, որոնց ուղարկվել է հարցման էլեկտրոնային տարբերակը: Տվյալներն վերլուծվել են:
- Ձեռք բերված արդյունքների տարածման կազմակերպում: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքում ակտիվացվել է կրթության որակի ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ նորությունների բլոկը, մասնավորապես կրթության որակի ապահովմանն ուղղված գործողություններն առավել ակտիվ

սկսել ենք լուսաբանել ինչպես ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կայքում, այնպես ԳԿՄԿ ֆեյսբուքյան էջերում:

- 2014 թ. ՈԱ բաժնի նախաձեռնությամբ և համակարգմամբ կազմվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տարեկան ինքնավերլուծության զեկույցը:
- Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ բաժինը համակարգել է Համաշխարհային բանկի «Կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի ստեղծում և ներդրում» դրամաշնորհի շրջանակներում իրականացվող աշխատանքները:
- Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈԱ բաժինը ներգրավված է եղել ԳԿՄԿ-ում իրականացվող «Հեռավար կրթության կազմակերպում» ծրագրի աշխատանքներին, մասնավորապես արտաքին կապերի բաժնի հետ կազմակերպել է 2 դասընթաց-սեմինար հեռավար կրթության ներդրման ուղղությամբ:
- Հաշվետու ժամանակաշրջանում ՈԱ բաժինն իր ողջ կազմով անմիջականորեն մասնակցել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Ինստիտուցիոնալ հավատարմագրման փաթեթի /2016 թ. Փետրվարի 10/ ստեղծման, մշակման, խմբագրման աշխատանքներին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Կրթության որակի

ապահովման բաժնի պետ՝

բ.գ.թ. Ն. Վարդանյան

08.02.2016 թ.